**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ)**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

26-ը փետրվարի 2019թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
***Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝***
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, Ա. Մուրադյան,

***գնահատողներ՝***
ՀՀ ՊՆ աշխատակազմի քարտուղարության հսկողության բաժնի գլխավոր մասնագետ Խ. Սմբատյան,
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶՐՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԶՐՖԾ առաջատար մասնագետ, Ռ. Չաթոյան,
***Գնումները համակարգող՝***
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյանը:
**01.03.2019թ., *ժամը* 12:15**-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/8» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/8» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/8» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*
**Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

---

(Ա. Մաղաքյան)
**1.1** ՀՀ ՊՆ կարիքների համար **«Շինանյութի»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/8» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանում |
|---|---|
| 1. | «ՊռոմՏոռգՄնաբ» ԲԲԸ |
| 2. | Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի |
| 3. | Ա/Ձ Նորիկ Հակոբջանյան |
| 4. | «Արտաշես Մեծ» ՍՊԸ |
| 5. | «Էրիզ» ՍՊԸ |
| 6. | «Էքսպրես Շին» ՍՊԸ |
| 7. | «Հայր եվ Որդի Գյոդակյաններ» ՍՊԸ |
| 8. | «ՄԱՆԳՈՒԳ» ՍՊԸ |
| 9. | «Նարսան» ՍՊԸ |
| 10. | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ |
| 11. | «Սեմուր ընդ Կո» ՍՊԸ |
| 12. | «Օլանդա» ՍՊԸ |
| 13. | «Ֆոտոն» ՍՊԸ |
| 14. | «Տեխնոսնաբ» ՍՊԸ |
| 15. | «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

---

(Ա. Մառաքյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, ***բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.***

**«Տեխնոսնաբ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում բացակայում են՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում՝ **(Հավելված N 1)-ը**, հայտարարություն՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին (**Հավելված N 2)-ը**, տվյալներ մասնակցի իրական շահառուների մասին **(Հավելված N 2.1)-ը**, հայտարարություն՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին **(Հավելված N 3)-ը**, հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին **(Հավելված N 4)-ը:**

**«ՊռոմՏոռգՄնաբ» ԲԲԸ-ի** կողմից ներկայացված հայտում՝ բացակայում էր մասնակցի իրական շահառուների մասին տվյալների վերաբերյալ հայտարարության **(Հավելված N 2.1)-ը:**

2.3 Մնացած մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել **«Տեխնոսնաբ» ՍՊԸ-ի** և **«ՊռոմՏոռգՄնաբ» ԲԲԸ-ին** մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

***05.03.2019թ., ժամը 11:30-ին*** կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ **ՊռոմՏոռգՄնաբ»** **ԲԲԸ**-ի և **«Տեխնոսնաբ» ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվել են անհամապատասխանությունները և վերջիններիս հայտերը գնահատեց բավարար՝ հրավերի պահանջներին համապատասխան:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

## 3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

---

(Ա. Մաղաքյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

**Մասնակիցների գնային առաջարկները Տես՝ արձանագրությանը կից Հավելված 1-ում:**

*«**ՊռոմՏոռգՄնաբ» ԲԲԸ-ի** կողմից ներկայացված գնային առաջարկը 2-րդ չափաբաժնի մասով, իսկ **«Սեմուր ընդ Կո» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված գնային առաջարկը 1-ին չափաբաժնի մասով նշված արձանագրությանը կից Հավելված 1-ում չեն ներառվել, քանի որ չեն համապատասխանում ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին:*

3.2 **«ՊռոմՏոռգՄնաբ» ԲԲԸ-ի** գնային առաջարկը 2-րդ չափաբաժնի մասով, իսկ **«Սեմուր ընդ Կո» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված գնային առաջարկը 1-ին չափաբաժնի մասով, չեն համապատասխանում «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), մասնավորապես՝ «Արժեքը» և «ԱԱՀ» դաշտերում լրացված թվերի հանրագումարը չեն համապատասխանում ընդհանուր գնի սյունակում տառերով լրացված գումարին: Հիմք ընդունելով նշված հանգամանքը՝ **հանձնաժողովը որոշեց՝ մերժել 2-րդ չափաբաժնի մասով «ՊռոմՏոռգՄնաբ» ԲԲԸ-ի, իսկ 1-ին չափաբաժնի մասով՝ «Սեմուր ընդ Կո» ՍՊԸ-ի հայտերը:**

Ըստ ներկայացված տվյալների Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի և «Արտաշես Մեծ» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող չեն:

3.3 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

## 4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

---

(Ա. Մաղաքյան)

4.1 **06 .03.2019թ** (հանձնաժողովի անդամների էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց «Նարսան» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:**

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

# «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/8» ծածկագրով ընթացակարգի գների ամփոփում

| Գնման առարկա | Չ/Մ | Քանակ | Ընդհանուր գին /նախահաշվային/ | «ՊռոմՏողՄնաբ» ԲԲԸ | | Ա/Ձ Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի | | Ա/Ձ Նորիկ Հակոբջանյան | | «Արտաշես Մեծ» ՍՊԸ | | «Էրիզ» ՍՊԸ | | «Էքսպրես Շին» ՍՊԸ | | «Հայր եվ Որդի Գյոդակյաններ» ՍՊԸ | | «ՄԱՆԳՈՒՍ» ՍՊԸ | | «Նարսան» ՍՊԸ | | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ | | «Սեմուր ընդ Կո» ՍՊԸ | | «Օլանդա» ՍՊԸ | | «Ֆոտոն» ՍՊԸ | | «Տեխնոսնաբ» ՍՊԸ | | «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ | | 1-ին տեղ գրաղեցնող մասնակից |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | |
| Մետաղական ցանցեր Մետաղյա ցանց 10*1.5մ | մ2 | 9000 | 9,000,000 | 8,800,000 | 10,560,000 | 7,398,000 | 7,398,000 | 5,580,000 | 6,696,000 | 8,055,000 | 8,055,000 | 5,250,000 | 6,300,000 | 5,910,000 | 7,092,000 | 5,985,000 | 7,182,000 | 5,220,000 | 6,264,000 | 4,999,500 | 5,999,400 | 6,885,000 | 8,262,000 | | | 6,750,000 | 8,100,000 | 5,685,000 | 6,822,000 | 5,550,000 | 6,660,000 | 6,900,000 | 8,280,000 | «Նարսան» ՍՊԸ |
| Երկաթյա արտադրանք (Մետաղյա անկյունակ 40*40*4 | կգ | 9,680 | 5,207,840 | | | | | 3,436,400 | 4,123,680 | 4,162,400 | 4,162,400 | 3,936,533.33 | 4,723,840 | 4,259,000 | 5,110,800 | 3,630,000 | 4,356,000 | 3,726,800 | 4,472,160 | 3,218,600 | 3,862,320 | | | 3,566,666.67 | 4,280,000 | 4,210,800 | 5,052,960 | 3,984,933.33 | 4,781,920 | 3,613,866.67 | 4,336,640 | 3,460,600 | 4,152,720 | «Նարսան» ՍՊԸ |

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

---

(Ա. Մաղաքյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/8» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11$^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Ա. Մուրադյան |
| Գնահատող | Ա. Պապյան |
| Գնահատող | Ռ. Չաթոյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Ա. Մաղաքյան |